Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ *Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջնակարգ դպրոց*

Թեմա՝ *Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում*

Վերապատրաստող, մենթոր՝ *Նունե Ասրյան*

Ուսուցիչ՝ *Մարիամ Հարությունյան*

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

ԳԼՈՒԽ 1 Բուլինգի տեսակների եվ դրսեվորումների տարածվածությունը դպրոցում

1.1 Ի՞նչ է բուլինգը ----------4

1.2 Բուլինգի տեսակները ----------6

1.3 Բուլինգի դրսևորումները դպրոցում ----------8

ԳԼՈՒԽ 2

2.1 Բուլինգի տեսական և էմպիրիկ հետազոտությունները և դրանց համեմատական վերլուծությունը ----------11

2.2 Ուսուցչի օգնականի դերը դպրոցում բուլինգի կանխարգելման գործում ----------14

Եզրակացություն ----------16

Գրականության ցանկ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս ժամանակի հետ համընթաց ավելանում են բուլինգի դեպքերը, կախված սոցիալական մղումներով: Բուլինգը անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդում, հոգեբանական տեռոր, ծեծ, հեգնանք, ծաղրանք, բամբասանքների տարածում: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած խմբում, բայց առավել վտանգավոր է դպրոցականների շրջանում:

Բուլիինգի զոհ հիմնականում դառնում են հասարակության մեջ իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձինք, կամ այն անձինք, ովքեր ունեն որոշակի արտաքին, ֆիզիկական թերություններ: Ներկայումս թիրախային խմբում են գտնվում ԿԱՊԿՈՒ աշակերտները, ովքեր համընդհանուր ուսուցման մեջ են ներառված, ինչպես նաև ցածր սոցիալական խմբին պատկանող աշակերտները: Պետք է նշենք, որ ներկայումս ինտերնետ հարթակը, մեծ ազդեցություն ունի անձանց վրա, ինչի հետևանքով ավելանում է կիբեռբուլինգի դեպքերը: Այստեղ թիրախային խմբում են գտնվում երեխաները, դեռահասները, ցածր մտավոր ունակություն ունեցող աշակերտները և այլն:

<u>Հետազոտության նպատակն է</u> բացահայտել բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում:

<u>Հետազոտության խնդիրներն են՝</u>

- Ուսումնասիրել հոգեբանական գիտական գրականության մեջ բուլիինգի վերաբերյալ հայեցակետերը,
- Վեր հանել բուլինգի հնարավոր պատճառները,
- Ուսումնասիրել բուլինգի կանխարգելման և կարգավորման փորձը,
- Ներկայացնել ուսուցչի օգնականի դերը բուլիինգի կանխարգելման գործում:

ԳԼՈՒԽ 1 Բուլինգի տեսակների և դրսևորումների տարածվածությունը դպրոցում

1.1 Ի՞նչ է բուլինգը

Բուլիինգը կամ **հալածանքը**, որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումն այլ անձի նկատմամբ, որը կրում է շարունակական բնույթ։ «Բուլիինգ» տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ սկզբնապես նշանակելով «սիրելի», ապա տարբեր ձևափոխություններից հետո, իր ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականից։

Բուլիինգի ենթարկվող անձը համարվում է բուլիինգի զոհ, իսկ բուլիինգի ենթարկող անձին համարում են բուլեր։ Բուլիինգը բաժանվում է մի քանի տարատեսակների ՝ կիբեր բուլիինգ, որը իրականացվում է համակարգչի միջոցով, օգտագործելով համակարգիչը որպես վնասելու միջոց, ֆիզիկական բուլիինգ՝ հարվածելու, ծեծի միջոցով, վերբալ, կամ բառացի բուլիինգ՝ պիտակավորման, ծաղրական անունների միջոցով, և հարաբերական բուլիինգ, որի միջոցով փորձում են մեկուսացնել մարդուն իր շրջապատից և կանխամտածվածորեն բացառում նրան հասարակությունից։ Բուլինգի զոհ հիմնականում դառնում են հասարակության մեջ իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձինք, կամ այն անձինք որոնք ունեն որոշակի արտաքին, ֆիզիկական, արտաքին թերություններ՝ մեծ քիթ, տգեղ արտաքին, կաղ ոտք և այլն։ Բուլինգի զոհ դառնալը շատ առումներով կապված է երեխաների դաստիարակությունից, ընտանեկան մթնոլորտից, որը նույնպես անդրադառնում է երեխայի ինքնագնահատակի ձևավորման վրա։ [9]

Շատ կարևոր է իմանալ, որ բուլիինգը արգելվում է օրենքով։ Մի շարք երկրներ, ինչպիսիք են Կոլումբիան, Միչիգանը, Մոնտանան, Հյուսիսային Դակոտան, Հարավային Դակոտան, բուլինգը դատապարտում են օրենքով։ ԱՄՆ-ի քառասունհինգ նահանգները նույնպես ընդունել են հակաբուլիինգային օրենքներ։

Բուլիինգը կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնության տեսքով։

Բուլիինգն ունի իր առանձնահատկությունները՝

1. Ուժերի անհավասար բաշխում

2. Բռնության կրկնվող բնույթ

3. Բուլիինգի ենթարկվողի սուր էմոցիոնալ արձագանք

Բուլիինգից տուժում են բոլորը՝ բռնարարը, բուլինգի ենթարկվողը, ինչպես նաև այլ մասնակիցները կամ ականատեսները:

Բուլիինգի առկայությունը վատագույն ձևով փոխում է մթնոլորդը՝ լինի դա աշխատանքային միջավայր, լսարան, թե դասարան: [8]

1.2 Բուլինգի տեսակները

- Բուլիինգ-հոգեբանական:

Այն բնութագրվում է վիրավորանքների, ծաղրանքների, մականունների, բամբասանքների, շշուկների, սպառնալիքների և նվաստացումների օգտագործմամբ, որոնք հոգեբանորեն ազդում են անհատի վրա և հանգեցնում են խտրականության:

- Բուլիինգ-ֆիզիկական:

Այն ամենատարածվածն է աշակերտների շրջանում: Այն ներառում է բոլոր տեսակի ֆիզիկական ագրեսիաները, ինչպիսիք են հարվածելը, հարվածելը կամ հրելը, որոնք կարող են իրականացվել մեկ կամ ավելի ագրեսորների կողմից:

- Բուլիինգ-հասարակական:

Դա մեկն է, որը ձգտում է մեկուսացնել կամ բացառել երեխային կամ դեռահասին սոցիալական խմբից: Նրանք նրան հասնում են սոցիալական կամ տնտեսական խտրականության, այլոց հետ անտարբեր վերաբերմունքի միջոցով:

- Կիբեռհետապնդում:

Այս դեպքում ագրեսորը օգտագործում է սոցիալական ցանցերը և այլ տեխնոլոգիական ռեսուրսներ զոհին հետապնդելու և կեղծ հաղորդագրություններ ուղարկելու համար: Այս հաղորդակցման ուղիները լայնածավալ են, և հաղորդագրությունները շատ ավելի արագ են տարածվում:

- Բուլիինգ-սեռական:

Դա սեռական նշանակության ոտնձգության կամ չարաշահման տեսակ է՝ առավել

լուրջ դեպքերում: Այս պարագայում սովորաբար հիմնականում զոհեր են ունենում աղջիկները, ինչպես նաև համասեռամոլ անձինք: [7]

1.3 Բուլիինգի դրսևորումները դպրոցում

Դպրոցներում հանդիպող բուլիինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար, և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության: Բուլիինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ, կրթական հաստատություններ, այս առումով հատկապես ակտիվ մասնակցություն են ունեցել Սկանդինավյան մի շարք երկրներ, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, բայց դա չի նշանակում, որ այս հարցը չեն բարձրաձայնել այլ, ոչ այդքան զարգացած երկրներ: Այս հարցը արդիական է այնտեղ, որտեղ կա դպրոցական միջավայր, կամ ընդհանրապես միջավայր:[1] Բուլիինգը ըստ ձևերի կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլիինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը. Հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, անընդհատ բարացնել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլիինգի դեպքում բուլիինգի զոհին մեկուսացնում են իր միջավայրից՝ ընկերներից, կանխամտածված մեկուսացնելով նրան այդ միջավայրից: հետազոտությունները փաստում են, որ ուղղակի բուլիինգի ձևը հիմնականում բնորոշ է տղաներին, իսկ անուղղակի բուլիինգի ձևը՝ աղջիկներին: Ուղղակի բուլիինգը ավելի հաճախ հանդիպում է կրտսեր դպրոցի, երբեմն էլ միջին դպրոցի երեխաների մոտ, իսկ անուղղակի բուլիինգը արդեն ավելի հասուն տարիքում՝ միջին դպրոցում: Չնայած այս դասակարգմանը, և անուղղակի, և ուղղակի բուլիինգը հանգեցնում է նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության: [3]

Դպրոցներում երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունները բաժանում ենք երեք խմբի՝

1. ֆիզիկական և հոգեբանական բռնություն – բռնության այս տեսակները դպրոցում կիրառվում են ուսուցիչների, աշակերտների կամ դպրոցի աշխատակազմի կողմից: Մարմնական պատիժները հիմնականում իրականցվում են ձեռքերով, ձողերով կամ փայտե ձեռնափայտերով. դրանք որոշ դպրոցներում համարվում են «օրինական ու լիազորված»:
2. Սեռական բռնություն – դպրոցներում տեղի ունեցող սեռական բռնությունները

հիմնականում ուղղված են աղջիկներին և կատարվում են տղամարդ ուսուցիչների կամ համադասարանցիների կողմից:

3. Բարոյահոգեբանական բռնություն՝ ծաղր – Սա վարքի մի տեսակ է, որը, հիմնականում լինելով բանավոր, պատասխան չստանալու դեպքում կարող է հանգեցնել ծայրահեղ դաժանության: Այս վարքը ցուցաբերող երեխաների մոտ կեսը և՛ զոհեր են, և՛ նախաձեռնողներ: Համացանցը և բջջային հեռախոսները նոր հնարավորություններ են ստեղծում էլեկտրոնային նամակների, քննարկումների, անհատական ինտերնետային էջերի, տեքստային ուղերձների և նկարների փոխանցման միջոցով ծաղրելու համար:

Ամենից հաճախ դրանք այն երեխաներն են, ովքեր ունեն՝

• ֆիզիկական արատ. երեխաներ, որոնք կրում են ակնոցներ, ունեն լսողական, շարժողական համակարգի խախտումներ: Այսինքն՝ հիմնականում այն երեխաները, ովքեր չեն կարող համապատասխան պատասխան տալ նախաձեռնողների գործողություններին:

• Վարքային առանձնահատկություններ. ծաղրման թիրախ են դառնում պարփակված և, հակառակը, չափից ավելի ակտիվ երեխաները: Որոշ չափով գերակտիվ երեխաներն իրենց հասակակիցներից ավելի «անամոթ» են, միաժամանակ նաև միամիտ:

• Արտաքին տվյալներ. այն ամենը, ինչը երեխային առանձնացնում է շրջապատողներից, կարող է հանդիսանալ ծաղրի պատճառ՝ կարմրահերություն, պեպեններ, դուրս ցցված ականջներ, ծուռ ոտքեր, գլխի առանձնահատուկ ձև, մարմնի քաշ (գիրություն կամ նիհարություն):

• Սոցիալական հմտությունների զարգացման ցածր աստիճան. կան երեխաներ, որոնք չեն կարողանում խոսքային և ֆիզիկական բռնությանը տալ համարժեք պատասխան վատ զարգացած ինքնաարտահայտման և հաղորդակցման կարողությունների պատճառով: Սոցիալական հմտությունների նորմալ զարգացմամբ երեխաների համեմատությամբ վատ զարգացած սոցիալական հմտություններով երեխաները ավելի հեշտ են ընդունում զոհի կարգավիճակ: Զոհի դերին համակերպված երեխան հաճախ փորձում է արդարացնել բռնություն իրականացնողներին. «ուրեմն ես այդպիսին եմ, ես դրան արժանի եմ»:

• Վախ դպրոցից. սա առաջանում է, երբ երեխան դպրոց է հաճախում արդեն իսկ բացասական տրամադրվածությամբ: Երբեմն այդ վախը փոխանցվում է ծնողներից, որոնք իրենց ժամանակին ևս ունեցել են խնդիրներ դպրոցում: Վախի առաջացման խթան կարող է հանդիսանալ «չար ուսուցչի» կամ էլ բացասական գնահատականների մասին պատմությունները: Երեխան, որն ունի անվստահություն և վախ դպրոցի նկատմամբ, առավել հաճախ է դառնում բնության զոհ:

• Կոլեկտիվում գործելու անփորձություն (տնային երեխաներ). երեխաները, որոնք մինչև դպրոցը չեն հաճախել մանկական խմբակներ, ներգրավված չեն եղել որևէ մանկական կոլեկտիվում, կարող են չունենալ հաղորդակցման համար անհրաժեշտ հմտությունները: Սրա հետ միասին նրանք իրենց գիտելիքներով և կարողություններով կարող են գերազանցել մի շարք երեխաների, որոնք հաճախել են մանկական խմբակներ:

• Հիվանդություններ. գոյություն ունեն հիվանդությունների մի շարք տեսակներ, որոնք առաջացնում են հասակակիցների ծաղր: Օրինակ՝ էպիլեպսիա, կակազություն, խոսքային խախտումներ և այլն:

• Մտավոր կարողությունների ցածր մակարդակ և ուսուցման դժվարություններ. ցածր առաջադիմությունը ձևավորում է երեխայի ցածր ինքնագնահատականը. «Ես չեմ հաղթահարի: Ես ուրիշներից վատն եմ…»: Ցածր ինքնագնահատականը կարող է դրսևորվել երկու ձևով՝ մի դեպքում երեխան ներկայանում է որպես զոհ, մյուսում՝ որպես բռնություն իրականացնող: [2]

ԳԼՈՒԽ 2

2.1 Բուլիինգի տեսական և էմպիրիկ հետազոտությունները և դրանց համեմատական վերլուծությունը

Բուլիինգի երևույթը մանրամասնորեն ուսումնասիրվել է բրիտանացի հետազոտող Դ. Լեյնի կողմից: Նա շեշտը դրել է այս գործընթացի կառուցվածքի և այն գործոնների վրա, որոնք պայմանավորում են այն: Դ. Լեյնը տվել է բուլլինգի թերևս լավագույն սահմանումը. բուլլինգը բարդ գործընթաց է, որում կան զոհեր, հետապնդողներ, նրանց միջև փոխազդեցություններ, ինչպես նաև տեղի ունեցողի նկատմամբ մեծահասակների և դպրոցի դիրքորոշումներ: [5]

Ս. Կրիվցովան նշում է, որ «բուլլինգ» եզրույթի տակ պետք է հասկանալ «երեխաների ագրեսիան այլ երեխաների նկատմամբ՝ պայմանով, որ գոյություն ունի ագրեսորի գերակայություն զոհի նկատմամբ և բռնության գործողությունների կրկնության միտում, ընդ որում զոհի պատասխանը ցույց է տալիս, թե որքան ուժեղ է նա ազդվում տեղի ունեցողից»: [4]

Դ. Կուտուզովայի կարծիքով՝ հալածանքի պատճառներից մեկը «երեխայի ոչ սովորականությունն է» կամ տարբերությունը «խմբում ընդունված ստանդարտներից»: Ըստ նրա՝ դպրոցում ուրիշների հաշվին ինքնահաստատվել ցանկացող մեկ աշակերտի առկայությունն արդեն իսկ բավարար է բուլլինգի իրավիճակի առաջացման համար:

Ա. Բոչավերը և Կ. Խլոմովը, վերլուծելով մի շարք տվյալներ, գալիս են եզրակացության, որ ուղղակի հալածանքի ենթարկվում են հիմնականում կրտսեր դպրոցի սովորողները, այն դեպքում, երբ միջին և ավագ դպրոցում ավելի շատ դիտվում է անուղղակի հալածանք: Նաև պարզվում է, որ տղաները աղջիկներից ավելի շատ են հակված մասնակցել հալածանքներին տարբեր դերերով (զոհ, հալածող, վկա), և միևնույն ժամանակ տղաները ավելի հաճախ են դառնում ֆիզիկական հալածանքի զոհ. նրանցից գումար են խլում և փչացնում են իրերը, նրանց սպառնում են և ստիպում ինչ-որ բան անել: Աղջիկները ավելի հաճախ դառնում են բուլլերների կողմից բամբասանքի, անբարո արտահայտությունների և ժեստերի զոհ:

Ս. Կրավցովան գալիս է եզրակացության, որ բուլլինգի զոհերի ակնհայտ գենդերային տարբերություն չկա. և՛ աղջիկները, և՛ տղաները հավասար չափով են ենթարկվում հալածանքների: Իսկ Վ. Սոբկինի և Մ. Սմիսլովայի անցկացրած հետազոտության տվյալները փաստում են, որ տղաները աղջիկներից ավելի հազվադեպ են նշում, որ առերեսվել են ֆիզիկական կամ հոգեբանական բռնության: Ընդ որում, տղաները աղջիկներից հաճախ են նշում ֆիզիկական կամ հոգեբանական դրվագային բռնության մասին: [6]

Մի շարք հետազոտողների կողմից պարզվում է աշակերտները բուլիինգի մասին խոսելիս, առաջինը սկսում են պատմել ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ բուլիինգի դրսևորումների մասին: Աշակերտների նկարագրություններից, մի քանի կարևոր բացահայտում են առանձնացվել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վերաբերյալ.

Աշակերտների ընկալմամբ,

- Ուսուցիչների մեծամասնությունը ունի մանկավարժական և հոգեբանական հմտությունների պակաս:
- Ուսուցիչները հաճախ իրենց անձնային, հոգեբանական, ընտանեկան և աշխատանքային խնդիրները պոռոյեկտում են աշակերտների վրա: Ըստ նրանց պատճառն այն է, որ ուսուցիչը կարող է վատ տրամադրությամբ մտնել դասարան և «բարկությունը թափել» որևէ պատահական աշակերտի վրա, առանց տեսանելի/հասկանալի պատճառի:
- Ուսուցիչների կողմից ագրեսիվ վերաբերմունքը, բղավելը, կոպտելը կարող է լինել ինչպես մեկանգամյա երևույթ ամբողջ դասարանի նկատմամբ, այնպես էլ տևական լարված փոխհարաբերությունների ձևաչափով 1 կամ մի խումբ աշակերտների կամ ամբողջ դասարանի հետ:
- Աշակերտների ընկալմամբ, ուսուցիչների կողմից վատ վերաբերմունքի են արժանանում այն աշակերտները, ովքեր ունեն ցածր ինտելեկտուալ կարողություններ, դժվարությամբ են յուրացնում առարկան, աշակերտի ընտանիքի ֆինանսական վիճակը շատ բարձր չէ և այլն:

- Ուսուցչի կողմից բացասական վերաբերմունքի են արժանանում նաև այն աշակերտները, ովքեր տվյալ ուսուցչի առարկայով հետաքրքրված չեն։

2.2 Ուսուցչի օգնականի դերը դպրոցում բուլիինգի կանխարգելման գործում

Լուծումներ միշտ կան, այս խնդրի լուծումն ու կանխարգելումը պետք է լինեն երեխա, ծնող և ուսուցիչ ակտիվ համագործակցության ու միևնույն ժամանակ, նրանց հանդեպ անհատական մոտեցման շնորհիվ։

Բուլիինգի կանխարգելման հարցում ուսուցիչներն և ուսուցչի օգնականներն ունեն իրենց մեծ ազդեցությունը։ Ամեն ինչ պետք է սկսել կանխարգելումից.

- Դպրոցում կազմակերպել բաց դասեր, իրազեկիչ հանդիպումներ, որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կծանոթանան երևույթին։
- Դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնալ խնդրին, քննարկել երևույթը, խոսել դրա վատ ազդեցությունների մասին։
- Աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները, միասին կարդալ այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները։
- Երբ բուլինգ է նկատվում աշակերտների մոտ, պետք է լսել երկու կողմին էլ, առանց նվաստացումների բուլերին բացատրել, որ բուլինգը վատ երևույթ է։
- Երբեք չպետք է խրախուսել բուլերների կատարած վատ արարքները։ Թե՛ բուլերի, թե՛ զոհի ծնողներին պետք է զգուշացնել հարաբերությունների և գործողությունների ընթացքի մասին՝ նրանց հետ լինելով ակտիվ համագործակցության մեջ։

Բուլիինգի կանխարգելման հարցում անհամեմատելի է ծնողի դերը.

- Միշտ պետք է պատրաստ լինել երեխայի հետ երկխոսության, քննարկել թե՛ լավ, թե՛ վատ արարքները։
- Պետք է դառնալ երեխայի համար վստահելի, լավ ընկեր, խրախուսել այն ժամանակ, երբ պատմում է իր խնդիրների մասին, սովորեցնել խնդիրներն ինքնուրույն լուծել, բայց նաև ցո՛ւյց տալ ծնողի աջակցությունը և միշտ հիշեցնել, որ նրա կողքին են։
- Ճանաչե՛լ երեխայի ընկերներին, հասկանալ, թե ում հետ է անցկացնում իր ժամանակը։

- Օգնել երեխային հասկանալ, թե ինչ է բուլինգը, և ինչպես կարելի է կանխել այն։ Նրան բացատրե՛լ, որ բուլինգը լավ երևույթ չէ և կարող է վատ ազդեցություն ունենալ ինչ-որ մեկի համար։
- Երեխային սովորեցնել կարեկից լինել և, իհարկե, կարեկցե՛լ նրան։
- Երբ երեխան ենթարկվել է բուլինգի, առաջին հերթին պետք է ուսումնասիրել իրավիճակը համակողմանի։ Ժամանա՛կ տրամադրել, որպեսզի հասկանալ իրականում ինչ է պատահել, ովքեր են ներգրավված եղել, ինչպես է ամեն ինչ սկսվել։
- Կա՛պ պահպանել ներգրավված բոլոր երեխաների ծնողների հետ՝ նրանց զգուշացնելով իրենց երեխայի վարքի մասին։
- Համագործակցել դպրոցի հետ. քննարկել յուրաքանչյուր հանգամանք, աջակցել երեխային՝ պահանջելով, որ բուլերը կրի պատասխանատվություն իր կատարածի համար, քանի որ երբ նա իր արարքին համապատասխան պատասխանատվությունը չի կրում, անպատժելիության մթնոլորտում նման դեպքերի հաճախականությունը մեծանում է։
- Մշտապես կապ պահպանել դպրոցի հոգեբանի հետ, հանդիպել և նրա հետ քննարկել երեխայի պահվածքը։ Երեխայի և հոգեբանի համատեղ աշխատանքը ևս կարող է օգնել այս հարցում։
- Վստահ լինել, որ երեխան ապահով միջավայրում է և իրեն թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես լավ է զգում ։
- Եվ վերջապես, լինել լավ օրինակ երեխայի համար։

Սրանք բուլիինգի կանխարգելման փոքրիկ միջոցներն են, որոնք շատ դեպքերում կարող են օգտակար լինել բուլինգի զոհերի համար։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դեռահասության տարիքում բուլլինգի խնդիրը չի կորցնում իր արդիականությունը մինչ օրս, քանի որ հետազոտությունները ցույց են տալիս, որ այսօր կրթական հաստատություններում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվում յուրաքանչյուր երրորդ աշակերտը: Գիտական աշխատությունների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել բուլլինգի երկու տեսակ՝ անիմիջական-ֆիզիկական և անուղղակի, որը այլ կերպ անվանում են սոցիալական ագրեսիա: Ընդ որում, ուղիղ ֆիզիկական բուլլինգը ավելի բնորոշ է տղաներին, իսկ անուղղակին և սոցիալական դեպրիվացիան ավելի շատ բնորոշ են աղջիկներին: Ընդհանրապես տղաները ավելի հաճախ են մասնակցում բուլլինգին, քան աղջիկները:

Բուլլինգի կանխարգելման համար անհրաժեշտ է հասկանալ այն պայմանավորող պայմանները և պատճառները, ինչպես նաև գործընթացի առանձնահատկությունները: Դպրոցում բռնության զոհ կարող է դառնալ ցանկացած երեխա, մասնավորապես նրանք, ովքեր հասակակիցներից ինչ-որ բանով տարբերվում են: Բուլիինգի զոհ հիմնականում դառնում են հասարակության մեջ իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձինք, կամ այն անձինք, ովքեր ունեն որոշակի արտաքին, ֆիզիկական թերություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիտամեթոդական հոդվածներ « Մխիթար Գոշ» 2020 / N1 / էջ 434
2. Алексеева И. А., Новосельский И. Г. Жестокое обращение с ребенком. Причины. Последствия. Помощь.- М., Генезис, 2005 г., 256 с.
3. Бочавер А. А., Хломов К. Д., Буллинг как объект исследований и культурный феномен // Психология. Журнал Высшей школы экономики. 2013. Т. 10. № 3. С. 149-159.
4. Кривцова С. В., Шапкина А.,Н., Белевич А.,А., Буллинг в школах мира: Австрия, Германия, Россия. Образовательная политика. 2016. № 3 (73). С. 97-119. [էջ 3]
5. Лэйн Д. ,Школьная травля (буллинг). Детская и подростковая психотерапия / Подред. Дэвида Лейна и Эндрю Миллера. СПб.: Питер, 2001. С. 240-274.
6. Собкин В.С., Смыслова М.М. Буллинг в стенах школы: влияние социокультурного контекста (поматериалам кросскультурного исследования) // Социальная психология и общество. 2014. Т. 5. № 2. С. 71-86.
7. https://elearning.kasa.am/pluginfile.php/9998/mod_resource/content/0/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%A8%20%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4.pdf 10/04/23
8. https://www.swv.am/index.php/hy/our-pillars-am/rapid-response-unit-am/1213-2018-12-05-12-55-30 6/04/23
9. https://www.unicef.org/armenia/%D5%B4%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5 6/04/23